# ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

# ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԴԱՇՆԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ

# ԵՎ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ

# ՄԻՋԵՎ

# ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ

# ՄԱՍԻՆ

2016

Գերմանիայի Դաշնային Հանրապետության Կառավարությունը
և
Հայաստանի Հանրապետության Կառավարությունը,

ելնելով Գերմանիայի Դաշնային Հանրապետության և Հայաստանի Հանրապետության միջև առկա բարեկամական հարաբերություններից,

կամենալով ամրապնդել և խորացնել առկա բարեկամական հարաբերությունները գործընկերային ֆինանսական համագործակցության միջոցով,

գիտակցելով, որ այդ հարաբերությունների պահպանումը կազմում է սույն Համաձայնագրի հիմքը,

նպատակ ունենալով նպաստել Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական զարգացմանը,

վկայակոչելով Գերմանիայի Դաշնային Հանրապետության դեսպանության՝ 2016թ. դեկտեմբերի 19-ի հատկացումը (հայտագիր թիվ 154/2016),

համաձայնության եկան հետևյալի շուրջ.

**Հոդված 1**

(1) Գերմանիայի Դաշնային Հանրապետության Կառավարությունը Հայաստանի Հանրապետության Կառավարությանը կամ երկու Կառավարությունների կողմից համատեղ ընտրվելիք այլ ընդունող կողմերի հնարավորություն է ընձեռում Վերականգնման վարկերի բանկից (ՎՎԲ) ստանալ հետևյալ գումարները.

1. ֆինանսական օժանդակություններ՝ հետևյալ ծրագրերի իրականացմանն ու աջակցմանն ուղղված անհրաժեշտ հարակից միջոցառումների համար.

   ա) մինչև 750 000 եվրո (բառերով՝ յոթ հարյուր հիսուն հազար եվրո)՝ 2-րդ պարբերության 1-ին կետում նշված ծրագրին,

   բ) մինչև 2 700 000 եվրո (բառերով՝ երկու միլիոն յոթ հարյուր հազար եվրո)՝ 5-րդ հոդվածի 3-րդ պարբերությունում նշված «Ախուրյան գետի ջրային

ռեսուրսների համապարփակ կառավարում» I (նախագծային 2-րդ փուլ) ծրագրին,

գ) մինչև 2 000 000 եվրո (բառերով՝ երկու միլիոն եվրո)՝ 2014թ. ապրիլի 11-ին Գերմանիայի Դաշնային Հանրապետության Կառավարության և Հայաստանի Հանրապետության Կառավարության միջև ստորագրված «2013թ. ֆինանսական համագործակցության մասին» համաձայնագրի 1-ին հոդվածի 2-րդ պարբերության 1-ին կետում նշված «Համայնքային ենթակառուցվածքներ II, 3-րդ փուլ» ծրագրին (ավելացում),

2. ընդհանուր թվով 5. 339. 139, 38 եվրոյի (բառերով՝ հինգ միլիոն երեք հարյուր երեսունինը հազար հարյուր երեսունինը եվրո, երեսունութ ցենտ) ֆինանսական օժանդակություններ ազգարային ապահովագրությունների ներդրման ծրագրի համար,եթե ուսումնասիրության արդյունքում հաստատվի այդ ծրագրին օժանդակելու նպատակահարմարությունը և նաև այն, որ այն՝ որպես կանանց հասարակական դիրքի բարելավմանն ուղղված միջոցառում, կամ աղքատության հաղթահարմանն ուղղված ինքնասատարող միջոցառում, կամ վարկերի երաշխիքային հիմնադրամներ միջին ձեռնարկությունների համար կամ սոցիալական ենթակառուցվածքներին կամ շրջակա միջավայրի պահպանությանն ուղղված ծրագիր, բավարարում է ֆինանսական օժանդակության միջոցով աջակցություն ստանալու առանձնահատուկ նախապայմանները:

(2) Բացի այդ՝ Գերմանիայի Դաշնային Հանրապետության Կառավարությունը Հայաստանի Հանրապետության Կառավարությանը կամ երկու Կառավարություն-ների կողմից համատեղ ընտրվելիք այլ վարկառուի հնարավորություն է ընձեռում ստանալ Վերականգնման վարկերի բանկի կողմից հանրային զարգացման քաղաքականության շրջանակում արտոնյալ պայմաններով տրամադրվող՝ մինչև 20 000 000 եվրո գումարի չափով (բառերով՝ քսան միլիոն եվրո) վարկ՝ «Գերմանահայկական ֆոնդ» (ԳՀՖ), վերաֆինանսավորման գիծ I» ծրագրի համար, եթե ուսումնասիրության արդյունքում հաստատվի ծրագրերին օժանդակելու նպատակահարմարությունը զարգացման քաղաքականության տեսանկյունից, եթե Հայաստանի Հանրապետությունը շարունակի պահպանել նախկին վարկային հուսալիությունը, և եթե Հայաստանի Հանրապետության Կառավարությունը, եթե վարկառուն ինքը կամ ՀՀ կենտրոնական բանկը չեն, տրամադրի պետական երաշխիք: Ծրագիրը չի կարող փոխարինվել այլ ծրագրերով:

(3) Եթե Գերմանիայի Դաշնային Հանրապետության Կառավարությունը Հայաստանի Հանրապետության Կառավարությանը ավելի ուշ ժամանակահատվածում հնարավորություն է ընձեռում Վերականգնման վարկերի բանկից ստանալ լրացուցիչ վարկեր կամ ֆինանսական օժանդակություններ՝ 1-ին և 2-րդ պարբերություններում նշված ծրագրերի նախապատրաստման, կամ լրացուցիչ ֆինանսական օժանդակություններ՝ 1-ին պարբերությունում նշված ծրագրերի իրականացման ու համակարգման համար անհրաժեշտ հարակից միջոցառումների անցկացման համար, ապա կիրառվում է սույն Համաձայնագիրը:

**Հոդված 2**

(1) 1-ին հոդվածում նշված գումարների օգտագործումը, այն պայմանները, որոնցով տրամադրվում են այդ գումարները, ինչպես նաև հանձնարարականներ տալու ընթացակարգը սահմանվում են Վերականգնման վարկերի բանկի և վարկեր կամ ֆինանսական օժանդակություններ ստացողների միջև կնքվող պայմանագրերով, որոնք ենթարկվում են Գերմանիայի Դաշնային Հանրապետության օրենսդրությանը:

(2) 1-ին հոդվածի 1-ին պարբերության, 1-ին կետի, ինչպես նաև 1-ին հոդվածի 2-րդ պարբերությունում նշված գումարների հատկացումը չի կատարվի, եթե հատկացման տարվան հաջորդող վեց տարիների ընթացքում չկնքվեն համապատասխան վարկային և ֆինանսական պայմանագրերը: Այս գումարների հատկացման համար սահմանված վերջնաժամկետը 2022թ. դեկտեմբերի 31-ն է: 1-ին հոդվածի 1-ին պարբերության 2-րդ կետում նշված գումարի հատկացումը չի կատարվի, եթե համապատասխան վարկային և ֆինանսավորման պայմանագրերը կնքված չլինեն մինչև 2020թ. դեկտեմբերի 31-ը:

(3) Հայաստանի Հանրապետության Կառավարությունը, եթե վարկառուն ինքը կամ ՀՀ կենտրոնական բանկը չեն, երաշխավորում է Վերականգնման վարկերի բանկի օգտին վճարումները եվրոյով՝ ի կատարումն 1-ին պարբերության համաձայն կնքվելիք պայմանագրերով վարկառուների ստանձնած պարտավորությունների:

(4) Հայաստանի Հանրապետության Կառավարությունը, եթե ֆինանսական օժանդակություններ ստացողը ինքը կամ ՀՀ կենտրոնական բանկը չեն, Վերականգնման վարկերի բանկին տալիս է երաշխիք, որ կկատարվեն պարտքի վերադարձման այն պահանջները, որոնք կարող են բխել 1-ին պարբերության համաձայն կնքվելիք ֆինանսավորման պայմանագրերից:

## Հոդված 3

Հայաստանի Հանրապետության Կառավարությունն ստանձնում է Վերականգնման վարկերի բանկի կողմից վճարման ենթակա այն հարկերը, որոնք ծագում են 2-րդ հոդվածի 1-ին պարբերությունում նշված պայմանագրերի կնքման և իրականացման արդյունքում: 2-րդ հոդվածի 1-ին պարբերությունում նշված պայմանագրերի կնքման և իրականացման արդյունքում առաջացող ավելացված արժեքի հարկը ստանձնում է Հայաստանի Հանրապետության Կառավարությունը: Բացի այդ՝ Հայաստանի Հանրապետության Կառավարությունը վճարում է բոլոր այն պետական տուրքերը, որոնք ենթակա են վճարման Վերականգնման վարկերի բանկի կողմից:

## Հոդված 4

Հայաստանի Հանրապետության Կառավարությունը վարկերի և ֆինանսական օժանդակությունների օգտագործումից անհրաժեշտաբար բխող՝ ծովային, ցամաքային և օդային ճանապարհներով անձերի և գույքի տեղափոխման համար ուղևորներին և առաքողներին տալիս է տրանսպորտային ձեռնարկության ազատ ընտրության հնարավորություն, չի ձեռնարկում միջոցներ, որոնք կբացառեն կամ կդժվարացնեն Գերմանիայի Դաշնային Հանրապետությունում գործող տրանսպորտային ձեռնարկությունների իրավահավասար մասնակցությունը, անհրաժեշտության դեպքում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տրամադրում է պահանջվող թույլտվություններ տրանսպորտային հիշյալ ձեռնարկությունների մասնակցության համար:

## Հոդված 5

(1) Գերմանիայի Դաշնային Հանրապետության Կառավարության և Հայաստանի Հանրապետության Կառավարության միջև 2015թ. հունիսի 16-ին կնքված «2014թ. Ֆինանսական համագործակցության մասին» համաձայնագրում նշված «Դպրոցների էներգասպառման արդյունավետությունը բարձրացնող վերանորոգում» ծրագրի համար արտոնյալ տոկոսադրույքով նախատեսված վարկը, որը տրամադրվում է Զարգացման քաղաքականության շրջանակում Վերականգնման վարկերի բանկի կողմից, կվերածրագրավորվի 15 000 000 եվրո (բառերով՝ տասնհինգ միլիոն եվրո) գումարով և կօգտագործվի «Գերմանահայկական ֆոնդ (ԳՀՖ), վերաֆինանսավորման գիծ II» ծրագրի համար, եթե ուսումնասիրության արդյունքում հաստատվի այդ ծրագիրն օժանդակելու նպատակահարմարությունը:

(2) Գերմանիայի Դաշնային Հանրապետության Կառավարության և Հայաստանի Հանրապետության Կառավարության միջև 2015թ. հունիսի 16-ին կնքված «2014թ.

Ֆինանսական համագործակցության մասին»համաձայնագրի 1-ին հոդվածի 1-ին պարբերության 3-րդ կետում նշված՝ «Դպրոցների էներգասպառման արդյունավետությունը բարձրացնող վերանորոգում» ծրագրի հարակից միջոցառումը կվերածրագրավորվի 300 000 եվրո (բառերով՝ երեք հարյուր հազար եվրո) գումարով և կօգտագործվի «Գերմանահայկական ֆոնդ (ԳՀՖ), վերաֆինանսավորման գիծ II» ծրագրի հարակից միջոցառման համար, եթե ուսումնասիրության արդյունքում հաստատվի այդ ծրագիրն օժանդակելու նպատակահարմարությունը:

(3) Գերմանիայի Դաշնային Հանրապետության Կառավարության և Հայաստանի Հանրապետության Կառավարության միջև ֆինանսական համագործակցության վերաբերյալ 2013թ. նոյեմբերի 5-ին կնքված «2012թ. Ֆինանսական համագործակցության մասին» համաձայնագրի 1-ին հոդվածի 2-րդ պարբերության 3-րդ կետում նշված մինչև 18 500 000 եվրոյի «Ախուրյան գետի ջրային ռեսուրսների համապարփակ կառավարում I» ծրագիրը կփոխարինվի «Ախուրյան գետի ջրային ռեսուրսների համապարփակ կառավարում I (նախագծային 2-րդ փուլ)» ծրագրով:

(4) 1-ից մինչև 3-րդ պարբերություններում նշված գումարների հատկացումները չեն կատարվի, եթե մինչև 2019թ. դեկտեմբերի 31-ը չկնքվեն համապատասխան վարկային և ֆինանսավորման պայմանագրերը: Բոլոր մյուս պարագաներում սույն ծրագրի համար նույնպես կգործեն Ֆինանսական համագործակցության վերաբերյալ Գերմանիայի Դաշնային Հանրապետության Կառավարության և Հայաստանի Հանրապետության Կառավարության միջև 2013թ. նոյեմբերի 5-ին և 2015թ. հունիսի 16-ին ստորագրված համաձայնագրերի դրույթները:

## Հոդված 6

(1) Սույն Համաձայնագիրն ուժի մեջ կմտնի այն օրը, երբ Հայաստանի Հանրապետության Կառավարությունը Գերմանիայի Դաշնային Հանրապետության Կառավարությանը կծանուցի Համաձայնագրի ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերի կատարման ավարտի մասին: Հիմք կընդունվի ծանուցումն ստանալու օրը:

(2) Սույն Համաձայնագրի՝ Միավորված ազգերի կազմակերպության քարտուղարությունում ըստ ՄԱԿ-ի կանոնադրության 102-րդ հոդվածի գրանցումը կատարում է Հայաստանի Հանրապետության Կառավարությունը՝ Համաձայնագրի ուժի մեջ մտնելուց անմիջապես հետո: ՄԱԿ-ի քարտուղարության կողմից գրանցման հաստատումից անմիջապես հետո Համաձայնագրի մյուս կողմին ՄԱԿ-ում Համաձայնագրի գրանցման համարի փոխանցմամբ ծանուցվում է կատարված գրանցման մասին:

(3) Կողմերից յուրաքանչյուրը կարող է լուծել Համաձայնագիրը՝ մյուս Կողմին այդ մասին գրավոր ծանուցելով դիվանագիտական ուղիներով. Համաձայնագրի լուծումը սկսում է գործել մյուս Կողմում ծանուցման մուտքագրումից 30 (երեսուն) օր անց:

(4) Սույն Համաձայնագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել ցանկացած ժամանակ՝ Կողմերի միջև պայմանավորվածությամբ: Այսպիսի համաձայնություններն ուժի մեջ են մտնում սույն հոդվածի 1-ին կետով սահմանված կարգով:

(5) Սույն Համաձայնագրի մեկնաբանման կամ կիրառման շուրջ ծագող բոլոր վեճերը լուծվում են Կողմերի միջև խորհրդակցությունների կամ բանակցությունների միջոցով:

Կատարված է Երևան քաղաքում .....-ին՝ երկու բնօրինակով, յուրաքանչյուրը՝ գերմաներեն և հայերեն, ընդ որում՝ երկու տեքստերն էլ հավասարազոր են:

| | |
|---|---|
| Գերմանիայի Դաշնային Հանրապետության Կառավարության կողմից՝ | Հայաստանի Հանրապետության Կառավարության կողմից՝ |